«Եւ գՀայրն ասեմ տասն յոբելեանին)
«զարմանազան կրկնապատկին. } — 1000
«Եղև շինումն զանգակատան և 1240
«Իւր գաւթին,
«Բոլոր խցից չորեքկուսին
«Որ և ձեռամբ ձայնեղ դիտին
«Ս. Օհաննէս վարդապետին:

Ծանօթ.— Ըստ վերոգրեալ յիշատակագրի զանգատունը շինուած է 1240 տումարական թուականին հայոց, որ ցայժմ (1909) կընէ 118 տարի:

Տարօնեցի

9 Սեպտեմբեր | 909 ս. Առաքեալ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԿ

Հաբէշեաց նիստ ու կացից.—Հաբէշների կամ Եթովպացիների թէ կրօնական ծիսակատարութեան և թէ առօրեայ նիստ ու կացի մէջ կան մեզ համար տարօրինակ առանձնայատկութիւններ: Անհետաքրքիր չի լինի թուել վերջիններից մի քանիսը: Նիգուսի կամ թագաւորի գահի պատուանդանի առաջ դրուած է լինում վագրի խրտուիլակ՝ նստած դիրքով. բացի սովորական սպառազինութիւններից գահի երկու կողմը կանգնած թիկնապահներից երկուսի ձեռին լինում է մաղէ ճանճաքշիկ, և նրանց պարտականութիւնն է ճանճերը քշել, որոնց անհամար բազմութիւնը մեծ ձանձրոյթ է պատճառում հաբէշատանցիներին: Նոյնպիսի ճանճաքշիկներ ունին և քահանաները խաչի և աւետարանի վրայ նստած ճանճերը քշելու համար, որոնք նրանց կարծիքով պղծում են այդ սրբութիւնները:

Շատ պարզ են նրանց բնակարանները, ծածկը կազմուած է ձողերի վրայ հիւսած կոշտ խոտից՝ թեք ձևով դասաւորուած, պատերի ուղղութեամբ տնկուած սիւների վրայ, այդ բնակարանները մեծ մասամբ պատեր չեն ունենում և քիչ նման են լեռնաբնակների վրաններին. սեան կամ պատերի վրայ ի մէջ այլոց կախուած են լինում հոտաւէտ խէզով լի կլոր ամաններ, այդ խէզով նրանք այնքան օծում են իրանց մաղերը, որ մինչև

անդամ յանձնս կաթիկթում է հագուստի վրայ։ Քնելիս նրանք գլուխները դնում են կիսաշրջանաձև փոս ունեցող փայտէ բարձի վրայ, որպէս զի իւղով օծած մազերը չկեղտոտուին և հուտը չբանդուի։ Տան տէրը հիւրին ընդունում է բարձր տեղում նստած, իսկ հիւրը նստում է գորգով ծածկուած յատակի վրայ։ Պալատականները հանդիսաւոր ընդունելութիւնների ժամանակ ուսներին գցում են առիւծի, վագրի, ոչխարի մորթի կամ գազանի մորթու ձևով պատրաստուած մետաքսէ գործուածքներ։

Զբօսանք կրիայի վրայ։—Համբուրգում՝ Գագենբեկի հրաշալի կենդանաբանական պարտիզում կան ահագին կրիաներ, որոնց վրայ երեխաները նստում կամ կանգնում և քշում են։ Իւրաքանչիւրի ձեռին մի ճիպոտ կայ, որի ծայրին կապած է մի փունջ սալաթ. երեխան այդ պահում է կրիայի քթի առաջ, սա կարելի եղածին չափ արագ է գնում, որպէս զի ձեռք բերի իւր սիրելի կերակուրը։ Կաղմակերպւում էն կրիաների արշաւ, ուր մրցանակին ստանում են այն երեխաները, որոնք իրանց «ձին» լաւ են կառավարում, մի բան, որ այնքան էլ հեշտ չէ։ Այս մանկական զուարճալիքն անգլիացիք նորերս սկսեցին շահագործել Լոնդոնում, ճիշտ է, այստեղ չկան արշաւի համար կենդանի կրիաներ, այլ՝ արուեստական, բայց և այնպէս զոցանով արշաւել ցանկացողները չափազանց շատ են։ Այդ արշաւը կազմւում է այսպէս. տափարակ սապարիզի յատակի վրայ շարժւում են երկաթից շինած կրիաներ։ Արշաւողը կանգնում է կրիայի մէջքի վրայ՝ ձեռին բռնած երկու երասանակ. անհնար է գուշակել կրիայի շարժուելու ուղղութիւնը և դժուար է կանգնել նրա սահուն մէջքի վրայ, ուստի և միշտ ընկնելու զուարճալի դէպքեր են պատահում, որոնք ընդհանուր քրքիջ և ուրախութիւն են առաջ բերում։

Ամերիկական լրագրերի աճումը.—Ամերիկական լրագրերից մէկը մի յօդուած է տպել ամերիկական լրագրների աճման ու զարգացման մասին։ Հաւաքած վիճակագրական տեղեկութիւններն սկսւում են 1810 թուից։ Այդ ժամանակ Միացեալ Նահանգներում հրատարակուել է 336 թերթ, որոնցից 25-ը ամենօրեայ, 36 երկշաբաթաթերթ, իսկ 305-ը շաբաթաթերթ։ Ռուսական ամսաթերթերի պէս ամսաթերթեր այնտեղ ընաւ-

գոյութիւն չունէին։ Վերջին վիճակագրական տեղեկութիւնները վերաբերում են 1907 թուին. բոլոր պարբերական հրատարակութիւնների թիւն է 21535, որոնցից միայն 2415-ը օրաթերթ են, իսկ մնացածները շաբաթաթերթ, ամսաթերթ և այլն։ Այս բոլոր լրագրերի թէ բաժանորդագնից և թէ հատով վաճառումից գոյացած եկամուտն է մօտ 159,876,966 ռուբլի։

Ինքնավառ փարոս.—Երբ մօտ ժամանակներում Պետերբուրգում կայացաւ նաւագնացութեան միջազգային կոնգրեսը, այդ միջոցին կազմակերպուեց նաև այդ նիւթի վերաբերեալ ցուցահանդէս։ Այդտեղ առաջին անգամ ցուցադրուեց ինքնավառ փարոսը, որ մթնելուն պէս ինքն իրեն սկսում է վառուել։ Կոնգրեսի ժողովատեղիի շինութեան առաջ գրտնուած հրապարակում կանգնեցրած էր փարոս-աշտարակը նոր գործիքով։ Այդտեղ աշտարակի առաջ գետնի վրայ գտնուում էր փարոսի լապտերը շինուած կաթսայի երկաթից, որը մթնելուն պէս ինքն իրեն վառուում էր, լոյս էր տալիս ամբողջ գիշերը և լոյսը բացուելուն պէս մարում էր մինչև երեկոյ։ Այդպիսի փարոսները մեծ գործնական նշանակութիւն ունին ծովի վրայ, որովհետև չեն պահանջում մշտական հոգատարութիւն և մի անգամ սարքուելով՝ շատ երկար ժամանակ են բանում։ Լոյսն ստացւում է այն պահեստից, որ լցուած է կարբիտով (ածխային գաղ) և բռնկւում է էլեքտրական ակկումուլիատորի (էլեկտրականութեամբ լի գործիք) միջոցով։ Ամբողջ գործիքն սկսում է բանել այս ձևով. ցերեկուայ լոյսն ազդում է մի տեսակ քիմիական նիւթի վրայ, որը չի թողնում, որ կարբիտը պահեստից լցուի փարոսի վառարանը, ուստի և փարոսի լապտերը ցերեկը հանգչում է. իսկ երբ մթնում է, լոյսի բացակայութեան պատճառով յիշեալ քիմիական նիւթը անգործութեան է մատնուում. մինչ այդ լապտերի պահեստից վառարանն է հոսում կարբիտը և էլէքտրականութեան ազդեցութեամբ բռնկւում է ու բոցավառւում։

Թարգ. Ս. Ա.